«Էյ-Էն Աուդիտ»
փակ բաժնետիրական ընկերություն

2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2017

«Էյ-Էն Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հազար դրամ

	Ծան.	31.12.2016թ.	31.12.2015թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	62,576	66,412
Ոչ նյութական ակտիվներ		51	244
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**62,627**	**66,656**
Ընթացիկ ակտիվներ			
Տրված կանխավճարներ		925	629
Առևտրական դեբիտորական պարտքեր	5	13,083	17,713
Դրամական միջոցներ	6	4,435	4,779
Շահութահարկի գերավճար		-	5
Այլ ակտիվներ		30	53
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**18,473**	**23,179**
Ընդամենը ակտիվներ		**81,100**	**89,835**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		100	100
Կուտակված շահույթ		32,498	24,314
Պահուստային կապիտալ		15	15
Ընդամենը սեփական կապիտալ		**32,613**	**24,429**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	7	1,619	868
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,619**	**868**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	8	23,403	30,486
Ստացված ընթացիկ կանխավճարներ		1,750	1,608
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով		429	431
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով		5,315	15,243
Շահութահարկի գծով պարտավորություն		1,872	-
Այլ հարկերի գծով պարտավորություններ		1,901	2,799
Հաշվեգրած պարտավորություն աշխատակիցների հանդեպ		9,450	9,960
Այլ պարտավորություններ		2,748	4,011
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**46,868**	**64,538**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**81,100**	**89,835**

Տնօրեն՝ Հաշվապահ՝

Արթուր Հարությունյան Մերոնա Մեյրոյան

24 մարտի 2017թ.

Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

31 դեկտեմբերի 2016 թ. ավարտվող տարվա

հազար դրամ

	Ծան.	2016թ.	2015թ.
Հասույթ	9	140,304	132,891
Վաճառքի ինքնարժեք	10	(80,144)	(83,605)
Համախառն շահույթ		**60,160**	**49,286**
Վարչական և այլ ընդհանուր ծախսեր	11	(13,810)	(15,401)
Ֆինանսական ծախսեր	12	(2,236)	(2,796)
Այլ եկամուտներ (ծախսեր) զուտ		(4,388)	(1,441)
Շահույթ մինչև հարկումը		**39,726**	**29,648**
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	13	(7,228)	(5,334)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**32,498**	**24,314**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**32,498**	**24,314**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

24 մարտի 2017թ.

Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին

31 դեկտեմբերի 2016 թ. ավարտվող տարվա

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**100**	**34,311**	**15**	**34,426**
2015 թ. տարվա ընթացքում փոփոխություններ				
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	24,314	-	24,314
Շահաբաժնի հատկացում	-	(34,311)	-	(34,311)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**100**	**24,314**	**15**	**24,429**
2016 թ. տարվա ընթացքում փոփոխություններ				
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	32,498	-	32,498
Շահաբաժնի հատկացում	-	(24,314)	-	(24,314)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**100**	**32,498**	**15**	**32,613**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

24 մարտի 2017թ.

Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

31 դեկտեմբերի 2016 թ. ավարտվող տարվա

		հազար դրամ
Գործառնական գործունեությունից հոսքեր	**2016թ.**	**2015թ.**
Ծառայությունների մատուցումից	168,106	157,049
Այլ մուտքեր	3,571	2,913
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների համար	(21,198)	(18,783)
Վարձակալություն	(10,324)	(9,779)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(51,572)	(54,724)
Շահութահարկի վճարում	(4,600)	(5,250)
Վճարումներ այլ հարկեր՝ ներառյալ սոցիալական վճարների գծով	(25,438)	(25,919)
Այլ ելքեր	(11,682)	(10,481)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**46,863**	**35,026**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից	(1,027)	(1,682)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	-	(267)
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(1,027)**	**(1,949)**
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Բանկային վարկերի մարումից	-	(19,287)
Փոխառությունների ստացումից	13,306	24,430
Փոխառություններից մարումից	(23,374)	(2,595)
Վճարված տոկոսներ	(1,770)	(1,693)
Վճարված շահաբաժիններ	(34,242)	(29,170)
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	**(46,080)**	**(28,315)**
Ընդամենը զուտ հոսքեր	**(244)**	**4,762**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(100)	17
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվար	**4,779**	**-**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբեր	**4,435**	**4,779**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

24 մարտի 2017թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2004թ. դեկտեմբերին «Էյ-Էն Քոնսալթ» ՓԲԸ անվամբ՝ 1998թ. ստեղծված «Արշիար» ՍՊԸ-ի վերակազմավորմամբ: 2010թ. դեկտեմբերին «Էյ-Էն Քոնսալթ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի:

Ընկերությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ. ք. Երևան, Գյուլբենկյան 30/3 շենք, թիվ 129:

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01529594:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը տարեվերջին եղել է 18 հոգի (31.12.2015թ.՝ 20 հոգի):

Ընկերության հիմնական գործունեությունը հաշվապահական և աուդիտորական ծառայությունների մատուցումն է: Ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությունից աուդիտորական ծառայությունների լիցենզիա է ստացել 2010թ. ապրիլին:

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 հատ 1,000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից: Ընկերության բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Բաժնետիրոջ անունը	Բաժնետոմսերի տոկոսը և քանակը
Արթուր Հարությունյան (որակավորված աուդիտոր)	50 տոկոս (50 հատ)
Նաիրի Ադամյան (որակավորված աուդիտոր)	50 տոկոս (50 հատ)

2013 թ. աշնանը Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի կողմից նախաձեռնված և արտերկրյա անկախ փորձագետի կողմից իրականացված աուդիտի որակի մոնիթորինգը հաջողությամբ անցնելուց հետո, Ընկերությունը 2015 թ. հաջողությամբ անցել է նաև NEXIA Inertnational միջազգային աուդիտորական ցանցի (խոշորագույն տասնյակի մաս կազմող) կողմից իրականացված աուդիտի որակի ստուգումը (մոնիթորինգը) և 2015 թ. մարտից դարձել է NEXIA Inertnational միջազգային հաշվապահական և աուդիտորական կազմակերպությունների ցանցի անդամ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան՝ ՀՀ կառավարության 11 մարտի 2010 թվականի «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» № 235-Ն որոշմամբ հրապարակված պաշտոնական հայերեն տարբերակով:

Պաշտոնական հայերեն թարգմանության հրապարակումից մինչ օրս ՖՀՄՍ-ներում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնք սակայն հայերեն չեն հրապարակվել: Հայերեն չհրապարակված ոչ մի փոփոխություն ՖՀՄՍ-ներում չի կիրառվել սույն հաշվետվությունները պատրաստելիս: Այնուամենայնիվ, 2016 թվականի հունվարի 1-ից կամ ավելի վաղ ուժի մեջ մտած որևէ փոփոխության կիրառում ոչ մի էական ազդեցություն չէր ունենա սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստորև ներկայացված է համառոտ տեղեկատվություն դեռ հայերեն պաշտոնապես չթարգմանված և չհրապարակված ՖՀՄՍ-ների մասին:

Նոր կամ փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Որոշ նոր ստանդարտներ կամ ստանդարտների փոփոխություններ ուժի մեջ են մտել՝ սկսած 01 հունվարի 2016թ., որոնք կամ կիրառելի չեն եղել, կամ ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա: Դրանցից են.

«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում փոփոխությունները պարունակում են որոշակի ուղեցույց էականության որոշման հետ կապված:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում՝ կապված մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների հետ: ՀՀՄՍ 16-ին վերաբերող փոփոխություններն արգելում են կազմակերպություններին կիրառել հասույթի վրա հիմնված մաշվածություն: ՀՀՄՍ 38-ին վերաբերող փոփոխությունները ներառում են հերքելի ենթադրություն, որ հասույթը պատշաճ հիմունք չի հանդիսանում ամորտիզացիայի հաշվարկի համար: Նշված ենթադրությունը կարող է հերքվել միայն հետևյալ երկու հանգամանքներից մեկով.

ա) երբ ոչ նյութական ակտիվը հանդիսանում է հասույթի չափման միավոր, կամ

բ) երբ հասույթի և ոչ նյութական ակտիվից բխող տնտեսական օգուտների սպառման միջև առկա է բարձր կոռելյացիա:

Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

- *«Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը* (հրապարակվել է 2014թ. հուլիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց, սակայն թույլատրվում է չվերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը նախորդ ժամանակաշրջանների համար: Ստանդարտը ներմուծում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջներ, որոնք փոխարինում են «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում ներառված պահանջներին:
- *«Գնորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ը* (հրապարակվել է 2014թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.
    - *«Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11,*
    - *«Հասույթ» ՀՀՄՍ 18,*
    - *«Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ՖՀՄՍՄԿ 13,*
    - *«Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր» ՖՀՄՍՄԿ 15,*
    - *«Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» ՖՀՄՍՄԿ 18,*
    - *«Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» ՄՄԿ 31:*

- *«Վարձակալություն» ՖՀՄՄ 16* (հրապարակվել է 2016թ. հունվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը սահմանում է սկզբունքներ վարձակալությունների ճանաչման, չափման, բացահայտման և ներկայացման համար: Ի թիվս այլ նոր պահանջների, ստանդարտը պահանջում է, որ բոլոր վարձակալությունները (որոշակի փոքր բացառություններով) ճանաչվեն վարձակալի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.
    - *«Վարձակալություն» ՀՀՄՍ 17,*
    - *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» ՖՀՄՄՄԿ 4,*
    - *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» ՄՄԿ 15,*
    - *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» ՄՄԿ 27:*
- *«Ներդրումային գույքի փոխանցումներ» (փոփոխություններ «Ներդրումային գույք» ՀՀՄՍ 41-ում)* (հրապարակվել է 2016թ. դեկտեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Փոփոխություններով հստակեցվում է, թե երբ պետք է ներդրումային գույքը վերադասակարգվի որպես սեփականատիրոջ կողմից զբաղեցրած գույք կամ որպես պաշար և՝ հակառակը: Մասնավորապես, սահմանվում է, որ պետք է գույքը բավարարի կամ դադարի բավարարել ներդրումային գույքի սահմանմանը և, ի լրումն, փոփոխված լինի գույքի փաստացի օգտագործումը և միայն մտադրությունը բավարար չէ:
- *«ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ. 2014-2016թթ. ցիկլ»* (հրապարակվել է 2016թ. դեկտեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններ են կատարվել հետևյալ ստանդարտներում.
    - *«Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը» ՖՀՄՍ 1,*
    - *«Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում» ՖՀՄՍ 12,*
    - *«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում» ՀՀՄՍ 28:*
- *«Արտարժութային գործարքներ և կանխավճարային հատուցումներ» ՖՀՄՄՄԿ 22 մեկնաբանություն* (հրապարակվել է 2016թ. դեկտեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Մեկնաբանությամբ հստակեցվում է, որ երբ կազմակերպությունը արտարժույթով վճարում կամ ստանում է կանխավճար նախքան համապատասխան ակտիվի, եկամտի կամ ծախսի ճանաչումը, ապա հետագայում այդ ակտիվի, եկամտի կամ ծախսի սկզբնական ճանաչման ժամանակ օգտագործման ենթակա փոխարժեքի որոշման նպատակով գործարքի օր է համարվում այն օրը, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարային հատուցման վճարումից կամ ստացումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը:
- *«Բացահայտման նախաձեռնություն» (Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում)* (հրապարակվել է 2016թ. հունվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2017թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններով պահանջվում է, տրամադրել

բացահայտումներ, որոնք հնարավորություն կընձեռեն հասկանալ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխությունները (ինչպես դրամական միջոցների հոսքերից առաջացողները, այնպես էլ ոչ դրամային փոփոխությունները):

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներառված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2017թ. մարտի 24-ին՝ Ընկերության տնօրեն Ա. Հարությունյանի և հաշվապահ Մ. Մեյրոյանի կողմից:

2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

1. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները՝ սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, ինչպես նաև տեղանքի վերականգնման ծախսերը: Որակավորված ակտիվների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող փոխառության ծախսումները կապիտալացվում են որպես որակավորված ակտիվի սկզբնական արժեքի մաս:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Շենք	50 տարի
Համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	1-5 տարի:

2. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները՝ սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը: Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային հաշվապահական ծրագիր	5 տարի
Աուդիտի ծրագիր	5 տարի

Այլ ոչ նյութական ակտիվներ՝ իրավունքների պայմանագրային ժամկետներով (սովորաբար՝ 1 տարի՝ վճարի դիմաց ամենամյա երակարացմամբ):

3. Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

4. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես օգուտ կամ կորուստ այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

5. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

6. Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերի գծով ծախսից (եկամտից): Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկի գծով ծախսը (եկամուտը) ներառում է հարկի այն գումարը, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող շահույթի գծով՝ օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների ընթացիկ հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային բազաների միջև տարբերությունները: Հարկային բազան ակտիվին կամ պարտավորությանը հարկային

նպատակով վերագրված գումարն է: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող այնպիսի գործարքի ներքո ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը ճանաչման պահին չի ազդում ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկը չափվում է հարկի այն դրույքներով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, երբ դրանք կհակադարձվեն, հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային զեղչերի, չօգտագործված հարկային վնասների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ այնքանով, որքանով հավանական է ապագա հարկվող շահույթների ստացումը, որոնց դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են՝ այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտները կարող են օգտագործվել:

7. Պահուստ ճանաչվում է, երբ որպես անցյալ դեպքի արդյունք, Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը կատարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստը չափվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի զեղչմամբ՝ օգտագործելով մինչև հարկումը այնպիսի դրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և տվյալ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականը: Ժամանակ անցնելուն զուգընթաց պահուստի գծով զեղչի հետպտույտը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

8. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. աշխատավարձը
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
c. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որը ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարման կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Հիմնական միջոցներ

	Շենք	Համակարգչային տեխնիկա	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդ առ 31.12.2014թ.	**64,394**	**10,416**	**13,903**	**88,713**
Ավելացում՝	-	694	989	1,683
Օտարում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2015թ.	**64,394**	**11,110**	**14,892**	**90,396**
Ավելացում՝	-	369	487	**856**
Օտարում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2016թ.	**64,394**	**11,479**	**15,379**	**91,252**
Մաշվածություն				
Մնացորդ առ 31.12.2014թ.	**2,744**	**8,009**	**7,406**	**18,159**
Տարվա մաշվածություն	1,292	1,821	2,712	5,825
Օտարում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2015թ.	**4,036**	**9,830**	**10,118**	**23,984**
Տարվա մաշվածություն	1,285	1,080	2,327	4,692
Օտարում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2016թ.	**5,321**	**10,910**	**12,445**	**28,676**
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2014թ.	**61,650**	**2,407**	**6,497**	**70,554**
Առ 31.12.2015թ.	**60,358**	**1,280**	**4,774**	**66,412**
Առ 31.12.2016թ.	**59,073**	**569**	**2,934**	**62,576**

5. Առևտրական դեբիտորական պարտքեր

Առևտրական դեբիտորական պարտքերը ենթակա են վճարման հաջորդ ամսվա ընթացքում: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մոտ 8 մլն դրամ (2015թ.՝ 9 մլն. դրամ) դեբիտորական պարտքեր ժամկետանց են, որոնց գծով հարուցված են դատական գործեր (տե՛ս Ծանոթ. 16.3) և կայացվել են բռնագանձման վճիռներ, սակայն պարտատերերից մեկը գտնվում է սնանկացման գործընթացում, իսկ մյուսի գծով կատարողական գործողություններն ընթացքի մեջ են: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ճանաչված է արժեզրկման պահուստ 5,320 հազ. դրամ (2015թ.՝ 1,820 հազ. դրամ) գումարով: Արժեզրկումից կորուստը ներկայացված է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտների (ծախսերի) կազմում:

6. Դրամական միջոցներ

	2016թ.	2015թ.
Դրամային բանկային հաշիվներ	1,787	3,156
Արտարժութային բանկային հաշիվներ (ԱՄՆ դոլարով և Եվրոյով)	2,274	1,616
Դրամարկղ	374	7
Ընդամենը	**4,435**	**4,779**

7. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(a) *Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածների հետ.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ ակտիվ (պարտավորություն)	
Հազ. դրամ	**2016**	**2015**	**2016**	**2015**	**2016**	**2015**
Հիմնական միջոցներ		-	(3,023)	(2,865)	(3,023)	(2,865)
Դեբիտորական պարտք	-	-	(491)	-	(491)	-
Չօգտագործված արձակուրդի պահուստ	1,895	1,997	-	-	1,895	1,997
Զուտ հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**1,895**	**1,997**	**(3,514)**	**(2,865)**	**(1,619)**	**(868)**

(b) Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

Հազ. դրամ	**31 դեկտ. 2015**	**Ճանաչված շահույթում կամ վնասում 2016-ին**	**31 դեկտեմբերի 2016**
Հիմնական միջոցներ	(2,865)	(158)	(3,023)
Դեբիտորական պարտք	-	(491)	(491)
Չօգտագործված արձակուրդի պահուստ	1,997	(102)	1,895
Ընդամենը	**(868)**	**(751)**	**(1,619)**

Հազ. դրամ	**31 դեկտ. 2014**	**Ճանաչված շահույթում կամ վնասում 2015-ին**	**31 դեկտեմբերի 2015**
Հիմնական միջոցներ	(2,784)	(81)	(2,865)
Չօգտագործված արձակուրդի պահուստ	1,761	236	1,997
Ընդամենը	**(1,023)**	**155**	**(868)**

8. Բանկային վարկեր և փոխառություններ

Նախորդ տարվա ընթացքում բանկային օվերդրաֆտը վերաֆինանսավորելու, ինչպես նաև արտարժութային վարկի վաղաժամ մարման նպատակով Ընկերության բաժնետերերը ներգրավել են 10,000 հազ. դրամ միջնորդավորած բանկային վարկ 18% տոկոսադրույքով ՀՀ դրամով՝ ապահովված անշարժ գույքի գրավով և բաժնետերերի երաշխավորությամբ:

Մնացած փոխառություններն ամբողջությամբ կապակցված կողմերից են ստացված, հիմնականում անտոկոս են, ՀՀ դրամով, չապահովված: Ենթակա են մարման մեկ տարվա ընթացքում և արտացոլված են չզեղչված՝ անվանական գումարով:

9. Հասույթ

	2016թ.	2015թ.
Աուդիտի ծառայություններից հասույթ	19,257	19,806
Այլ հաշվապահական և խորհրդատվական ծառայություններից հասույթ	121,047	113,085
Ընդամենը	**140,304**	**132,891**

10. Վաճառքի ինքնարժեք

	2016թ.	2015թ.
Աշխատակիցների հատուցումներ	43,875	47,453
Ծառայությունների ձեռքբերում	3,850	1,125
Վարձակալություն	9,065	9,722
Մաշվածություն և ամորտիզացիա	4,885	6,404
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,468	2,100
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,431	4,883
Այլ	11,570	11,918
Ընդամենը	**80,144**	**83,605**

11. Վարչական և այլ ընդհանուր ծախսեր

	2016թ.	2015թ.
Աշխատակիցների հատուցումներ	7,743	8,374
Գործուղում	1,460	1,752
Գրասենյակային ծախսեր	1,910	2,010
Մասնագիտական զարգացում	1,215	1,613
Այլ	1,482	1,652
Ընդամենը	**13,810**	**15,401**

12. Ֆինանսական ծախսեր

Ֆինանսական ծախսերն իրենցից ներկայացնում են բանկային օվերդրաֆտի, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում տոկոսային ծախսերից կապիտալացում տեղի չի ունցել:

13. Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)

	2016թ.	2015թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	6,477	5,489
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ) (տե՛ս Ծանոթ. 7)	751	(155)
Ընդամենը	**7,228**	**5,334**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 20% է (2015 թ.՝ 20%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում.

	2016		2015	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթ մինչև հարկումը	39,726		29,648	
Շահութահարկ հարկի կիրառվող դրույքով	7,945	20.0	5,930	20.0
Չնվազեցվող ծախսերի, չհարկվող եկամուտների և լրացուցիչ նվազեցումների զուտ ազդեցությունը	(717)	(1.8)	(596)	(2.0)
	7,228	**18.2**	**5,334**	**18.0**

14. Ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությունները

14.1. Ընդհանուր ակնարկ

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարությանն ու ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Ընկերությունը վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

14.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտակա-նությունների չկատարմամբ Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ, և հիմնականում առաջանում է Ընկերության պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերից:

Առևտրական դեբիտորական պարտքեր – ներառում են ծառայությունների մատուցումից հաճախորդներից ստացվելիք գումարները: Պարտքային ռիսկի շարունակական գնահատումը կատարվում է դեբիտորների ֆինանսական վիճակի հիման վրա, և համապատասխան դեպքերում ստեղծվում է հնարավոր պարտքային կորուստների գծով պահուստավորում:

31 դեկտեմբերի 2016թ. դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	Հաշվեկշռային արժեք	
Հազար դրամ	**31.12.2016թ.**	**31.12.2015թ.**
Առևտրական դեբիտորական պարտքեր	13,083	17,713
Դրամական միջոցներ	4,061	4,772
	17,144	**22,485**

14.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

14.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Ընկերությունն ունի արտարժույթով արտահայտված ակտիվներ (իսկ նախորդ տարի՝ նաև վարկեր), հետևաբար ենթարկված է արտարժույթի փոխարժեքի տատանումների ռիսկին: Արտարժութային ռիսկին ենթարկվածություններն Ընկերությունը չի կառավարում:

Ընկերության արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Ֆինանսական ակտիվ/ պարտավորություն	**31.12.2016թ.**		**31.12.2015թ.**	
	USD	**EUR**	**USD**	**EUR**
Դեբիտորական պարտքեր	811	-	34	-
Դրամական միջոցներ	2,020	254	1,506	110
Արտարժութային զուտ ենթարկվածություն	**2,831**	**254**	**1,540**	**110**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքները, ինչպես նաև տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքները ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		**Հաշվետու ամսաթվի փոխարժեք**	
Դրամով	**2016թ.**	**2015թ.**	**31.12.2016թ.**	**31.12.2015թ.**
1 ԱՄՆ Դոլար	480.48	477.84	483.94	483.75
1 Եվրո	531.90	530.78	512.20	528.69

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում:

Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	31.12.2016թ.		31.12.2015թ.	
	Ազդեցությունը		Ազդեցությունը	
	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա	Շահույթի վրա	Սեփական կապիտալի վրա
USD-ի ուժեղացում 10%-ով	283	283	154	154
EUR-ի ուժեղացում 10%-ով	25	25	11	11

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ընկերությունն ունի ֆիքսված տոկոսադրույքով բանկային վարկեր և փոխառություններ (տե՛ս Ծանոթ. 8):

15. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությանն կապակցված կողմերն են բաժնետերերը և նրանց ընտանիքի անդամները:

Ընկերության ղեկավարությունը ստացել է հետևյալ հատուցումները՝

Հազ. դրամ	**2016թ.**	**2015թ.**
Աշխատանքի վարձատրություն	9,241	13,529

Կապակցված կողմերի հետ փոխառությունների գծով գործարքները ներկայացված են ստորև

Հազ. դրամ	**Գործարքի գումար 2016թ.**	**Գործարքի գումար 2015թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2016թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2015թ.**
Փոխառության ստացում	16,292	24,725	-	-
Փոխառության մարում	(23,375)	(2,595)	23,403	30,486

Կապակցված կողմերի հետ այլ գործարքներ՝

Հազ. դրամ	**Գործարքի գումար 2016թ.**	**Գործարքի գումար 2015թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2016թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2015թ.**
Կապակցված կողմերից վարձակալված մեքենաներ				
Վարձակալություն	4,008	4,008	-	-
	4,008	**4,008**	**-**	**-**

Վարձակալության գործարքները կնքված են չկապակցված անձանց հետ նույնանման գործարքների համար կիրառվող գներով:

16. Պայմանական դեպքեր

16.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

16.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

16.3. Դատական գործեր

Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունն իր երկու դեբիտորների հանդեպ հարուցել է դատական հայց՝ չկատարած դրամական պարտավորությունների հարկադիր կատարման պահանջով մոտ 10,500 հազ. դրամ գումարով: Նախորդ ժամանակաշրջանում մեկ հայցը բավարարվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ 650 հազ. դրամ գումարով: Սակայն այդ պարտավորությունը փաստացի կատարված չէ, և պարտապանը գտնվում է սնանկության վարույթում: Մյուս հայցով՝ հաշվետու ժամանակաշրջանում դատարանի վճռով Ընկերության հայցը բավարարվել է (հիմնական պահանջի մասով), սակայն դեռևս կատարված չէ:

Տնօրեն

Արթուր Հարությունյան

24 մարտի 2017թ.

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան